

մը սփռուած էր»<sup>(77)</sup> : Ատիկա ինծի կը յիշեցնէ Ստեփ. Օրբելեանի վկայութիւնը թէ Սիւնեաց Սահակիա Իշխանուհին Հայոց Մուշէ կաթողիկոսը կը մեծարէ զանի բարմեցնելով իշխանական զահի մը վրայ՝ ուր սփռուած էր ռսկեթել, մարգարտաշար գորգ մը<sup>(78)</sup> : 1835ին W. K. Stuart Կարին այցելութեան առթիւ կը վկայէ որ Հայոց եկեղեցիին մէջ «արունհրու աւելի հարուստ դասակարգը կը ծնրադրէր եկեղեցիին աջ կողմը՝ գորգերու վրայ»<sup>(79)</sup> : 1838ի առեւնները՝ Ամբրիկացի պատուելի Horatio Southgate կը վկայէ որ Պիթլիսի Հայոց եպիսկոպոսին այցելութեանը՝ զանի գտաւ «նստած գորգի մը վրայ, եկեղեցիին կից պարտէզին ծառերուն տակ, ան իր ծառաներուն օգնութեամբ ռաքի պիտի ելլէր զմեզ ընդունելու համար թէ որ մենք չաճապարէինք առաջ երթալ՝ արդիւիւու համբ : — Ծեր եմ, ըսաւ պատկառելի մարդը, իր զողոջուն ձեռքը զանդադօրէն սպիտակ մօրուքին վրայէն անցընելով : Հայերը ըսին թէ 120 տարեկան էր : Դողդազացոյ ճանով մը իր կեանքին կարգ մը պարազաներուն մասին խօսեցաւ, մինչ մենք իր մօտը՝ գորգին վրայ նստանք»<sup>(80)</sup> : Նոյն ուղեգիրը այս եպիսկոպոսին մասին կ'աւելցնէ որ ան քսան տարիէ ի վեր Պիթլիսի եպիսկոպոս է, իսկ անկէ ալ առաջ Կ. Պոլսոյ եպիսկոպոս եղած է : Դարձեալ կը վկայէ որ Ոստանի (Վան) տունները, ուր հիւրասիրուած է, գորգեր կը գործածուէին, մասնաւորապէս հարուստ հայու մը տունը, ուր շատրուանի մը մօտ խնձոյքով կը հիւրասիրուէի, «գետինը ծածկուած էր գորգերով եւ բազմօցներով, ուր հիւրերը, որոնց թիւը 12 էր, կրնային ընկողմանիլ իրենց ուղածին պէս»<sup>(81)</sup> : 1865էն քիչ առաջ, Էրր John Ussher Անգլիացիին էջմիածին կ'այցելէ եւ կաթողիկոսին կը ներկայացուի, կը վկայէ որ ընդունելութեան սրահը «գեղեցիկ կերպով կահաւորուած էր Թուրքի գորգերով (արեւելեան գորգերը յաճախ այդպէս կը կոչուէին թիւրիմացութեամբ. Յ. Բ.), ասեղնագործեալ բազմօցներով»<sup>(82)</sup> : Իսկ Աղթամարի մէջ եպիսկոպոսին սենեակը հանդրատօրէն կահաւորուած կը զանէ «գորգերով եւ բազմօցներով»<sup>(83)</sup> : 1890ին Մշոյ Ս. Կարապետի վանքը այցելող Ա. Տըվրլէ եւ Գ. Փիտոն կը վկայեն որ «գորգերը շատ խեղճ են, ուր կը ծնրադրեն հաւատացեալները»<sup>(84)</sup> : 1931ին էջմիածին իմ այցելութեանս, շատ յուսախար

(77) Անդ, էջ 329 :

(78) Հրատ. Կ. Վ. Շահնագարեան, էջ 116 :

(79) Journal. — London, 1854, p. 99.

(80) Narrative. — 1840, New York, Vol. I, p. 223.

(81) Անդ, էջ 263 :

(82) London to Persepolis. — London, 1865, p. 257.

(83) Անդ, էջ 329 :

(84) Ուղեւորութիւն ի Փոքր-Ասիա : — Վիեն. Մխթ. 1892, էջ 51 : Հոս աւելցրեմ որ 1920ին Կ. Պոլսոյ «Մեծ Շուկային մէջ ի վաճառ հանուած էին (գորգեր) ... որոնք հայերէն արձանագրութիւններ ունէին եւ ասոր համար արգելքի տակ առնուած էին : Այս անգամ այդ գորգերը յանձնուած են Պատրիարքարան, վանդի գորգերուն վրայ հայերէն աստերով Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ բառերը կը կարգացուին : Ստուգուած է որ այս գորգերը վաճառման տուած է Տարիւլ Էտամի անօրէնութիւնը, որուն ձեռքը անցած էր հաւանօրէն կամ Կեսարիոյ եւ կամ Մշոյ Ս. Կարապետի վանքէն» : (Կոչնակ : — Նիւ Եօրք, 1921, էջ 1408) :